ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՀՀ Ոստիկանության կրթահամալիրի ուսումնական կենտրոնը Իրականացնում է հետևյալ կրթական ծրագրերը՝

Հիմնական կրթական ծրագիր՝

- ՀՀ ԿԳ նախարարի կողմից 08.12.2010թ 1676-Ն հաստատված Նախնական մասնագիտական /արհոստագործական/ կրթության 0101 «Ոստիկանական գործ» մասնագիտության «Ոստիկան» որակավորման պետական կրթական չափորոշիչին համապատասխան՝ 6 ամսյա դասընթացներ, որը ՀՀ կառավարության 01.03.1018 թվականի թիվ 209-ն որոշմամբ մինչև 2020 թվականը սահմանվել է՝ 3 ամիս ժամկետով:

Լրացուցիչ կրթական ծրագրեր՝

- ՀՀ կառավարության 23.01.2003թ թիվ 174-Ն հաստատված <<Ոստիկանության ծառայողի վերապատրաստում անցնելու կարգը և պայմանները>> որոշման համաձայն՝ Ոստիկանության կրտսեր խմբի պաշտոններ զբաղեցնող ծառայողների վերապատրաստման /որակավորման/ դասընթացներ:
- ՀՀ ոստիկանության պետի 10.05.2005 թ թիվ 557-Ա հրամանի համաձայն հատուկ կանոնադրական խնդիրներ իրականացնող իրավաբանական անձանց աշխատակիցների հատուկ պատրաստականության դասընթացներ :

Կարող են իրականացվել հետևյալ կրթական ծրագրերը՝

- ՀՀ ԿԳ նախարարի 26.10.2012թ թիվ 972-Ն հրամանով հաստատված Նախնական մասնագիտական /արհեստագործական/ կրթության 0103 <<պահնորդական գործ>> մասնագիտության <<պահնորդ>> որակավորման պետական կրթական չափորոշիչին համապատասխան վճարովի դասընթացներ:
- ՀՀ ԿԳ նախարարի 26.10.2012թ թիվ 972-Ն հրամանով հաստատված Նախնական մասնագիտական /արհեստագործական/ կրթության 0102 <<թիկնապահական գործ>> մասնագիտության <<թիկնապահ>> որակավորման պետական կրթական չափորոշիչին համապատասխան վճարովի դասընթացներ: